



**“Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար.
աջակցություն երիտասարդ ձեռներեցներին”
Ծրագրի ընթացքի համառոտագիր**

**Հիմնական միջոցառումները և ձեռքբերումները 2013թ.-ի մարտից մինչև 2014թ.-ի
ապրիլի վերջն ընկած ժամանակահատվածի համար. ամփոփում**

- ՓՄՁ ԶԱԿ-ի և ՄԱԱԶԿ-ի միջև ստորագրվել են ենթահամաձայնագրեր շրջանառու ֆոնդ հիմնելու և ոչ ֆինանսական ծառայություններ մատուցելու շուրջ: 2013թ.-ի դեկտեմբերին ՓՄՁ ԶԱԿ-ը ստացել է առաջին հինգ CEFE դասընթացների կազմակերպման համար սահմանված գումարը, իսկ 2014թ.-ի հունվարին ՄԱԱԶԿ-ն փոխանցել է շրջանառու ֆոնդի համար սահմանված ներդրումը 200,000 եվրո գումարի չափով:
- Ձևավորվել է Ընտրող հանձնաժողով (ԸՀ) և Ծրագրի ղեկավար կոմիտե (ԾՂԿ): ԸՀ-ի հանդիպումները տեղի են ունենում յուրաքանչյուր դասընթացից հետո, իսկ ԾՂԿ-ի առաջին նիստը տեղի է ունեցել 2014թ.-ի փետրվարի 14-ին: Նիստի որոշմամբ Ծրագրի աշխարհագրությունն ընդլայնվել է` Լուռու և Շիրակի մարզերից բացի ընդգրկելով նաև Տավուշի և Գեղարքունիքի մարզերը:
- **Լուսաբանումը և հասարակության հետ կապերը.** ընտրվել է փորձառու լրագրող որպես հասարակության հետ կապերի փորձագետ: Արդեն իսկ տեղի է ունեցել իրազեկման առաջին արշավը, որի արդյունքում շարունակաբար բարձրանում է ծրագրի մասին տեղեկատվությունը և ավելանում է ծրագրին մասնակցելու համար դիմորդների թիվը: Թողարկվել է Ծրագիրը լուսաբանող տեսահոլովակ, որը եթեր է արձակվել տեղական ԶԼՄ-ների (հեռուստաընկերություններ և ռադիո) միջոցով` ընդգրկելով թիրախային մեծ լսարան: Պատրաստվել են փոքրիկ բրոշյուրներ, որոնք բաժանվել են թիրախային մարզերում (ՓՄՁ ոլորտի ակտիվիստ կամավորների միջոցով, ինչպես նաև համագործակցելով տեղական ՀԿ-ների ծրագրերի հետ: Ներկայումս Ծրագրի ազգային թիմն աշխատում է պաշտոնական ինտերնետային կայքի ստեղծման ուղղությամբ, որն արդյունավետ հարթակ կհանդիսանա իրազեկության հետագա բարձրացման և հաճողված պատմությունների լուսաբանման համար:
- **Խորհուրդ ռազմավարական որոշում ընդունողներին.** Ի լրումն նախատեսված արդյունքների, մարզերի ղեկավարության առաջարկով կատարվել է Լոռի և Շիրակի մարզերի գերակա ոլորտների ուսումնասիրություն` հատուկ ուշադրություն դարձնելով արտադրական գործունեության գնահատման, արդյունաբերության զարգացման միտումների և առաջնահերթությունների, ներքին ռեսուրսների և պոտենցիալ շուկաների հնարավորությունների վրա:
- **Ձեռնարկատիրության ոլորտին նվիրված դասընթացները և ֆինասավորումը.** 2013 թվականի հոկտեմբերին Ծրագրի իրականացման սկզբից մինչ օրս Լոռի և Շիրակ մարզերում անցկացվել է ձեռնարկատիրական 5 դասընթաց CEFE մեթոդաբանությամբ: Յուրաքանչյուր դասընթացից հետո անցկացվել է Ընտրող հանձնաժողովի նիստ` ներկայացված բիզնես նախագծերն ընդունելու և ֆինանսավորման որոշում կայացնելու նպատակով: Ստորև ներկայացված են Ծրագրի առաջին փուլի ամփոփ տվյալներն ըստ մարզերի:



Դասընթացների մասնակցության հայտերը	Դասընթացների մասնակիցները	Ֆինանսավորման հայտերը	Հաստատված վարկերը
Շիրակ (2 դասընթաց՝ Արթիկ և Գյումրի քաղաքներում) – մասնակցության 50 հայտ, որոնցից 18-ը կամ 36%-ը կին	30 մասնակից, որոնցից 11-ը կամ 37%-ը կին	19 հայտ, որոնցից 8-ը կամ 42%-ը կին	13 հաստատված վարկ, որոնցից 4-ը կամ 31%-ը կին: Ընդհանուր հաստատված գումարը՝ 36.6 մլն. ՀՀ դրամ:
Լոռի (3 դասընթաց՝ Վանաձոր, Սպիտակ և Ալավերդի քաղաքներում) - մասնակցության 130 հայտ, որոնցից 50-ը կամ 38%-ը կին	55 մասնակից, որոնցից 23-ը կամ 42%-ը կին	33 հայտ, որոնցից 10-ը կամ 10%-ը կին	22 հաստատված վարկ, որոնցից 7-ը կամ 32%-ը կին: Ընդհանուր հաստատված գումարը՝ 48.1 մլն. ՀՀ դրամ:
Ընդամենը			
Մասնակցության 180 հայտ, որոնցից 68-ը կամ 38%-ը կին	83 մասնակից, որոնցից 34-ը կամ 41%-ը կին	52 հայտ, որոնցից 21-ը կամ 40%-ը կին	35 հաստատված վարկ, որոնցից 11-ը կամ 31%-ը կին: Ընդհանուր հաստատված գումարը՝ 84.7 մլն. ՀՀ դրամ:

Ծրագրի երկրորդ փուլի համար նախատեսվող միջոցառումները և ակնկալվող արդյունքները.

Ոչ ֆինանսական և ֆինանսական աջակցությունը Ծրագրի շահառուներին կշարունակվի: Կանցկացվի ձեռնարկատիրական ևս 20 դասընթաց և ֆինանսավորման հայտերի ընդունման 20 հայտարարություն: Ծրագրի աշխարհագրությունը կընդլայնվի՝ ներառելով նաև Գեղարքունիքը և Տավուշը:

Տեխնիկական աջակցությունը. Սկսնակ և աճի փուլերում շահառուները տարբեր բնույթի տեխնիկական աջակցության կարիք կունենան՝ կախված ոլորտային առաձևահատկություններից, ինչպես նաև առանձին ընկերություններում առկա խնդիրներից և ֆինանսական դրությունից:

Ինստիտուցիոնալացումը. շրջանառու հիմնադրամի ստեղծումից և աջակցող ազգային անձնակազմի վերապատրաստումից հետո, իրականացման երկրորդ փուլում անհրաժեշտ է ապահովել Ծրագրի մոտեցումների ինստիտուցիոնալացումը՝ ծրագրի կայունությունն ապահովելու և երիտասարդ ձեռներեցների վարկունակությունը և երկրի տնտեսության զարգացման գործում նրանց դերը ներկայացնելու համար:

Գեներային ուղղվածությունը. Ծրագրում մինչև 50% կին շահառուների ընդգրկվածությունը առաջնահերթ խնդիրներից մեկն է: Այդ նպատակին հասնելու համար 2014թ.-ի վերջին, երբ հնարավոր կլինի արձանագրել առաջին դրական արդյունքները, կանցկացվեն հատկապես կին շահառուների հաջողված պատմությունները լուսաբանող բազմաթիվ տեղեկատվական արշավներ: Ավելին, Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող «Աջակցություն կին ձեռներեցներին» ծրագրի հետ համատեղ նախատեսվում է տարբեր համայնքներում իրականացնել

կանանց ակտիվ ներգրավվածությամբ արժեշտների բացահայտում և ձեռնարկել միջոցառումներ այդ արժեշտների զարգացման համար: Կին ձեռներեցների ֆինանսական



պլանավորման ունակությունները բարձրացնելու նպատակով նախատեսվում է համատեղ ուժերով անցկացնել «Ֆինանսական գրագիտություն» թեմայով դասընթացներ, ներկայացնելով նաև «COMFAR Mini» ծրագիրը: Բացի այդ, կկատարվի կանանց կարիքների և բիզնեսի նկատմամբ նրանց ընդհանուր վերաբերմունքի գնահատում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցում նրանց լավագույնս աջակցելու համար:



Ֆինանսավորման հայտ ներկայացրած և վարկավորված սկսնակները

Դասընթացների մասնակցության դիմումները	Դասընթացի մասնակիցները	Ֆինանսավորման դիմած մասնակիցները	Հաստատված վարկերը
Արթիկ, Շիրակի մարզ 2013թ. հոկտեմբեր 24 դիմորդ, որոնցից 9-ը՝ կին (38%)	14 մասնակից, որոնցից 6-ը՝ կին (43%)	1 տղամարդ, 29 տարեկան, հանդիսությունների սրահ	4.17 mln AMD (7,563 EUR)
		2 կին, 31 տարեկան, համակարգչային կենտրոն	1 mln AMD (1,813 EUR)
		3 կին, 26 տարեկան, երեխաների ժամանցի կազմակերպում	3.14 mln AMD (5,695 EUR)
		4 տղամարդ, 21 տարեկան, կաթի հավաքման կետ	-
		5 կին, 32 տարեկան, սպասքի խանութ	-
		6 կին, 23 տարեկան, համակարգչային կենտրոն	-
Վանաձոր, Լոռու մարզ 2013թ. հոկտեմբեր 44 դիմորդ, որոնցից 10-ը՝ կին (23%)	17 մասնակից, որոնցից 7-ը՝ կին (47%)	7 կին, 25 տարեկան, աղի գետնանուշի արտադր.	2.5 mln AMD (4,534 EUR)
		8 տղամարդ, 32 տարեկան, մսի արտադրություն	4 mln AMD (7,255 EUR)
		9 տղամարդ, 34 տարեկան, պանրի արտադրություն	2.99 mln AMD (5,423 EUR)
		10 տղամարդ, 33 տարեկան, արծաթագործական պարագաների արտադր.	1.74 mln AMD (3,156 EUR)
		11 կին, 33 տարեկան, սուրճի մասնագիտացված խանութ	0.9 mln AMD (1,632 EUR)
		12 կին, 35 տարեկան, հարսանեկան սրահ	0.7 mln AMD (1,269 EUR)
		13 տղամարդ, 27 տարեկան, թթվի արտադրություն	-
		14 տղամարդ, 29 տարեկան, սրճարան	-
		15 կին, 35 տարեկան, իջևանատուն	-
Գյումրի, Շիրակի մարզ 2014թ. Փետրվար-մարտ 26 դիմորդ, որոնցից 9-ը՝ կին (35%)	16 մասնակից, որոնցից 5-ը՝ կին (31%)	16 տղամարդ, 26 տարեկան, ալրաղաց	5 mln AMD (9,068 EUR)
		17 տղամարդ, 27 տարեկան, կոշիկի արտադրություն	3 mln AMD (5,441 EUR)
		18 տղամարդ, 27 տարեկան, անձեռոցիկի արտադրություն	3 mln AMD (5,441 EUR)
		19 տղամարդ, 25 տարեկան, պանրի արտադրություն	4.44 mln AMD (8,053 EUR)
		20 տղամարդ, 27 տարեկան, սնկի աճեցում	3 mln AMD (5,441 EUR)
		21 կին, 27 տարեկան, հացի արտադրամաս	2.8 mln AMD (5,078 EUR)
		22 տղամարդ, 20 տարեկան, ավտոտեխսպասարկում	2.35 mln AMD (4,262 EUR)
		23 տղամարդ, 22 տարեկան, հացի արտադրամաս	2.7 mln AMD (4,897 EUR)
		24 տղամարդ, 31 տարեկան, կաշվե հոդաթափերի արտադրություն	1 mln AMD (1,813 EUR)
		25 կին, 22 տարեկան, հրուշակեղենի արտադրամաս	1 mln AMD (1,813 EUR)
		26 Կին, 22 տարեկան, նիկելապատում	-
		27 տղամարդ, 27 տարեկան, պանրի արտադրություն	-
		28 կին, 25 տարեկան, գեղեցկության սրահ	

Դասընթացների մասնակցության դինոմաները	Դասընթացի մասնակիցները	Ֆինանսավորման դիմած մասնակիցները	Հաստատված վարկերը
<p>Մայիտակ, Լոռու մարզ 2014թ. Փետրվար-մարտ 44 դիմորդ, որոնցից 16-ը՝ կին (36%)</p>	<p>21 մասնակից, որոնցից 7-ը՝ կին (43%)</p>	29 տղամարդ, 32 տարեկան, ջերմոցի հիմնում	5 mln AMD (9,068 EUR)
		30 տղամարդ, 29 տարեկան, ատամնաբուժարան	5 mln AMD (9,068 EUR)
		31 տղամարդ, 25 տարեկան, ջերմոցի հիմնում	5 mln AMD (9,068 EUR)
		32 տղամարդ, 30 տարեկան, ավտոտեխնասարկում	5 mln AMD (9,068 EUR)
		33 տղամարդ, 21 տարեկան, մետաղապլաստե դռներ/պատուհաններ	4.81 mln AMD (8,724 EUR)
		34 տղամարդ, 28 տարեկան, հացի արտադրամաս	2 mln AMD (3,627 EUR)
		35 տղամարդ, 30 տարեկան, ջերմոցի հիմնում	1.94 mln AMD (3,520 EUR)
		36 կին, 24 տարեկան, երեխաների ժամանցի կենտրոն	1.6 mln AMD (2,912 EUR)
		37 կին, 31 տարեկան, մատնահարդարման սրահ	1.19 mln AMD (2,167 EUR)
		38 տղամարդ, 25 տարեկան, մսամթերքի արտադրություն	3.13 mln AMD (5,677 EUR)
		39 կին, 33 տարեկան, հացի արտադրամաս	-
		40 տղամարդ, 30 տարեկան, կիսաֆաբրիկատների արտադրություն	-
		41 տղամարդ, 24 տարեկան, հարսանյաց սրահ	-
		42 կին, 23 տարեկան, լուլիկի աճեցում	-
		43 կին, 24 տարեկան, համակարգչային կենտրոն	-
		44 կին, 30 տարեկան, կոսմետոլոգիայի կենտրոն	-
<p>Ալավերդի, Լոռու մարզ 2014թ. Փետրվար-ապրիլ 42 դիմորդ, որոնցից 24-ը՝ կին (57%)</p>	<p>15 մասնակից, որոնցից 6-ը՝ կին (40%)</p>	45 կին, 27 տարեկան, հիարսանյաց սրահ	1.5 mln AMD (2,721 EUR)
		46 տղամարդ, 23 տարեկան, պանրի արտադրություն	4.9 mln AMD (8,887 EUR)
		47 տղամարդ, 33 տարեկան, ջերմոցի հիմնում	1 mln AMD (1,813 EUR)
		48 տղամարդ, 26 տարեկան, հանգստի գոտի	3.04 mln AMD (5,505 EUR)
		49 տղամարդ, 32 տարեկան, անձեռոցիկի արտադրություն	4.75 mln AMD (8,615 EUR)
		50 կին, 27 տարեկան, իջեվանատուն	5 mln AMD (5,441 EUR)
		51 տղամարդ, 28 տարեկան, կոշիկի արտադրություն	-
		52 կին, 28 տարեկան, անկողնային սպիտակեղենի արտադրություն	-
ԸՆԴԱՄԵՆԸ			
<p>180 դիմորդ, որոնցից 68-ը՝ կին (38%)</p>	<p>83 մասնակից, որոնցից 34-ը՝ կին (41%)</p>	<p>52 ֆինանսավորման դիմում, որոնցից 21-ը՝ կին (40%), միջին տարիքը՝ 28</p>	<p>Ընդամենը Արթիկ: 15,073 EURO Ընդամենը Վանաձոր: 23,271 EURO Ընդամենը Գյումրի: 51,312 EURO Ընդամենը Մայիտակ (նախնական): 30,920 EURO Ընդամենը Ալավերդի (նախնական): 33,075 EURO Ընդամենը հաստատված վարկեր (առ 30-04-2014): 153,651 EURO</p>